

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԵՐԵՆՅԱՆ

ԵՐԵՄԻԱ ՋԷԼԷՊԻ ՔԵՕՄԻԻՐՃԵԱՆ. Պատմություն հրակիզման Կոնստանդ-
նուպոլսյան (1660 թվական), հրատարակության պատրաստեց Գ. Բամպուքճեան.
Ստանպուլ, 1991

Հայագետների դոկտոր Վահրամ Թորոքմա-
նի, հայր Ներսես Աղինյանի, Հասմիկ Սահակ-
յանի և ուրիշների կատարած հրապարակում-
ներից ու քննարկումներից հետո Երեմիա Քեո-
մյուրճյանին քիչ ուշադրության առնված հեղի-
նակների կարգին չի կարելի դասել Նվ ալ-
նուամենայնիվ, ինչպես պոլսահայ արդյունա-
վոր բանասեր Գևորգ Բամպուքճյանի այս նոր
հրապարակումն է հավաստում, XVII դարի այդ
քաղաքում և անդադրուն հեղինակի ոչ բոլոր
գործերն են պրպտվել ու գնահատվել: Գ. Բամ-
պուքճյանի հաշվումներով տարբեր ձեռագրա-
կան հավաքածուներում պահվում է հեղինակիս
ուրիշ հայերեն և վեց թուրքերեն անտիպ գործ
(մեծ մասամբ հեղինակային ինքնագրով)՝ այլ-
ևայլ բովանդակության ու գիտական հետա-
քննության: Շուրջ վեց անուն ստեղծագոր-
ծություն կորած է համարվում: Եթե այս ամե-
նին գումարենք հրատարակությամբ հայտնի
հայերեն վեց և թուրքերեն երկու գործերը, ապա
կարելի է քանակային պատկերացում կազմել
ներա ժառանգության վերաբերմամբ: Թեմատիկ
առումով այդ ժառանգությունը կարելի է բրնք
խմբի բաժանել՝ պատմագրական, գրական-գե-
ղարվեստական և դավանական-վարքագրական:
Տարբերակումը, իհարկե, մասամբ պայմանա-
կան է:

Քեոմյուրճյանի զուտ պատմագրական հա-
մարվող առանձին երկեր կա՞մ լիովին չափածո
շարադրանքներ են, կա՞մ չափածոյով ընդ-
միջվող նկարագրություններ: Մասնավորապես
վերջին խմբին է պատկանում «Պատմություն
հրակիզման Կոստանդնուպոլսյան» նոր հրապա-
րակումը: Այն պահանջվել է Երուսաղեմի №
892 ձեռագրում, Գ. Բամպուքճյանի որակմամբ՝
ինքնագրով, «նօտր և դժուարընթեռնելի» դըր-
չությամբ: Հրատարակելը վայելուչ հմտությամբ
է հաղթահարել բնագրի ընդօրինակումը, ճա-
նաչել ու ընդգծել հունարեն, թուրքերեն, եր-
բայերեն միավորները: Առհասարակ Գևորգ Բամ-

պուքճյանը անշտապ հետազոտող է, կարելույն
չափ փաստական ու հանդամանալի, ինչ հայտ-
նի էր տարիներ առաջ նրա հրատարակած
գրքերից («Ցակոր պատրիարք Նալեան», Ստան-
պուլ, 1983, «Ցովհաննէս պատրիարք Կոլոտ»,
Ստանպուլ, 1985): Այդ որակները նոր դըր-
քում արտահայտվել են թե՛ ներածական ու-
սումնասիրության և թե՛ մանավանդ բնագրին
հաջորդող հավելվածներում ու խրթին բառերի
բառարանում, Քեոմյուրճյանին վերագրող
դրականության մատենագիտություն ու հատուկ
անունների ցանկեր կազմելիս:

Աղբյուրագիտական առումով 1660 թ. հրդե-
հի բերած արհավիրքի նկարագրությունը լրաց-
վում է 1661 թ. «Մաշտոցի» հիշատակարանով,
Ստեփանոս վրդ. Մեղրեցու՝ ականատեսի վկա-
յություններով, Առաքել Դավրիժեցու տեղեկու-
թյուններով և այլն: Կարծում ենք՝ ավելորդ չէ
նաև հայազգի աշուղ Ագնավուրօղլիի հայատառ
թուրքերեն երկարաշունչ տաղը, որ արդեն մի
քանի հրատարակություն է ունեցել:

Ի դեպ, ուշ միջնադարի դրականության
պատմությամբ զբաղվողները գոհունակությամբ
պիտի արձանագրեն, որ այս գրքում ի նորո
հրատարակվել են Երեմիայի հնատիպ (XVII)
դարի երկրորդ քառորդի անթվակիր Տաղա-
րան) ուրիշ տաղերը՝ առանձին դեպքերում հե-
ղինակի անունը հոգող ծայրակապով: Գ.
Բամպուքճյանը կասկած չունի, որ խոսքը Երե-
միա Քեոմյուրճյանին է վերաբերում: Նա, փաս-
տորեն, ի մի է բերում Երեմիայի այլևայլ ձե-
ռագրերում ու տպագրերում ավանդված տա-
ղաչափյալ ժառանգության նշանակալի մասը,
այդ թվում և նրա որդու՝ Գրիգորիս վարդապե-
տի չափածո հիշատակարանը: Գ. Բամպուք-
ճյանին ենք պարտական Վիեննայի № 408
ձեռագրի թարգմանիչ Երեմիա Բյուզանդացու և
Քեոմյուրճյանի նույնանմությունը փաստելը, որ
չէր կոհհիլ մեծանուն Հ. Տաշյանը:

Ամփոփելուց առաջ կուզենայինք ավելաց-
նել, որ հրատարակելը խղճատորեն կազմել է

ժևոմյուրեւյան գերդաստանի տոհմաճառը, նոր անուններ հայտնաբերել և սերնդակցութիւնը ձգտել:

Ֆերիգլուդի լատինաց գերեզմանատան տապառաքներն ալբի անցկացնելիս նա հայտնաբերել և նույն գրքում հրատարակել է Երեմիայի նահատակ եղբոր՝ Տեր Կոմիտաս քահանայի Վեդոր (Վիկտոր) և Զամպետա թոռնուհիների 1740 թ. տապանագիրը:

Պիովին կարելի է պատկերացնել հայագի-

տական այն նորութիւնների գումարը, որ կարող է ընթել Կ. Պոլսի հայոց հին ու նոր հանգստատանների տապանագրերի համահավաք հրատարակութիւնը, իսկ հարգարժան բանասերը վաղուց արդեն ձեռնամուխ է եղել այդ գիվանի կազմութիւնը: Հուսանք, որ մեր տերունիքը կարժանանա այդ հրատարակութիւնը տեսնելուն:

Պետմ. գիտ. դպկոս Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ. Վանի բազմալեռնային պետական կրօնը, Հայաստանի ԳԱ հրատարակչութիւն, Երևան, 1990, 158 էջ և 31 էջ աղյուսակներ:

Հին քաղաքակրթութիւնների կազմավորման ու զարգացման իրական ընթացքը դժվար է պատկերացնել առանց դրանք կերտող ժողովրդի կամ ժողովուրդների հոգևոր կյանքի բոլոր գրեթե ամենաբնական և աշխարհակնկալութիւն մի հավաքական ամբողջութիւն հանդիսացող կրօնի համակողմանի ուսումնասիրման: Հազարամյակների ընթացքում հղկվելով և հարստանալով հարակից էթնոմշակութային հանրութիւնների կրօնական հավատալիքների հետ ունեցած շփումներով և սուլալ էթնոսի սոցիալ-քաղաքական զարգացման որոշակի մակարդակում հասնելով պետական պաշտոնական կրօնի առաքինի, այն վերածվում է առասպելական շրջապատում պահված մի յուրատեսակ խճախարհի, որի գիտական վերծանութիւնը անդամահատելի օկորնադրային է էթնիկական ու քաղաքական պատմութիւն մասնագետների համար:

Հենց այս տեսանկյունից պետք է գնահատել զրախոսվող աշխատութիւնը, որը հեղինակի՝ Ս. Գ. Հմայակյանի բազմամյա ուսումնասիրութիւնների հանրագումարն է, ավելի ճիշտ՝ «առաջին արգելապատնէշի» հաղթահարումը, որը կարող է հիմք լինել այս բնութիւն հետազոտ և այլ աշխատութիւնների համար: Որքան էլ տարօրինակ հնչի, լատինական տառերով և, որ մինչ այս, համեմատաբար հարուստ ուրարտագիտական գրականութիւն մեջ չկային աշխատութիւններ, որոնք Ուրարտուի (Վանի թագավորութիւն) կրօնը ներկայացնելիք թիւ թն շատ ամբողջական տեսքով. և այս աշխատութիւնը, բնականաբար, լրացնում է այդ բացը:

Վանի թագավորութիւն պետական կրօնը աշխատութիւնը կազմված է նախաբանից, հինգ գլուխներից, վերջաբանից, աղյուսակների, հա-

մառտադրութիւնների, աշխարհագրական անունների, անձնանունների, գիցանունների ցանկերից և ունի ընդարձակ, ռուսերեն ամփոփում: Նախաբանում արված է Վանի թագավորութիւն հակիրճ քաղաքական պատմութիւնը և պատճառաբանված է կատարված ուսումնասիրութիւն նպատակահարմարութիւնը:

Աշխատութիւն առաջին գլուխը նվիրված է Վանի թագավորութիւն կրօնի ուսումնասիրութիւն պատմութիւնն ու օկորնադրութիւնների վերլուծութիւնը: Հիմնականում առանձնացված են հինգ տիպի օկորնադրութիւններ՝ սնպագրական վիմագիր տվյալներ (գլխավորապես ուրարտական և ասուրա-բաբելական), հնագիտական նյութ, մատենագիտական, ազգագրական ու բանահյուսական տեղեկութիւններ: Գլուխը օկորնվում է Մհերի դան՝ Ուրարտուի հիմնական պաշտամունքային կառույցի և արձանագրութիւն բազմիցս, սարբեր հեղինակների կողմից կատարված թարգմանութիւնների համադրութիւնը ու ճշգրտամար. ծանր, և հնագիտական կրթութիւն ստացած մասնագետի համար անսովոր թվացող մի աշխատանք, որը, կարծում ենք, պսակվել է հաջողութիւն: Ասենք, իր իսկ կատարած ճշգրտումների հիման վրա է, որ հեղինակին հաջողվել է հինգերորդ գլխում վերլուծել մինչ այս չպարզաբանված և անհայտ ուրարտական երկրագործական-եղանակային ծեփերը, որոնք շատ մանրամասներով համընկնում են համանման հայկականների հետ: մանավանդ նրանք, որոնք առնչվել են խաղողագործութիւն հետ: Պատկերացում տալու համար կատարված աշխատանքի մանրազննութիւն մասին, նշենք, որ ծանոթագրված է այս բանականին խոշոր տեքստի գրեթե յուրաքանչյուր երրորդ բառը: Այս գլխում պա-